

Մարզում ինտենսիվ այգեգործության պոտենցիալի ուսումնասիրության նպատակով շրջայց Նոր Գեղի համայնքում

08.08.2018

Մարզում ինտենսիվ այգեգործության պոտենցիալի ուսումնասիրության նպատակով Կոտայքի մարզպետ Ռոմանոս Պետրոսյանը և Գյուղատնտեսության նախարար Արթուր Խաչատրյանն այսօր շրջայց կատարեցին Նոր Գեղի համայնքի այգիներում և ջերմոցային տնտեսություններում:

Ջերմոցային տնտեսություններում հիդրոպոնիկ եղանակով աճեցվում է լոլիկ, վարունգ և ելակ, այգիներում՝ խնձոր:

Դեպի խնձորի այգիներ այցի ընթացքում այգեգործները ներկայացրին իրավիճակը, հնարավորությունները, խնդիրներն ու մարտահրավերները:

«Ոռոգման ջրի հետ կապված խնդրին ես ծանոթ եմ. դա պայմանավորված է ջրային ռեսուրսների կառավարման ոլորտում առկա թերացումներով: Վստահեցնում եմ, որ հաջորդ տարի խնդիրը վերջնականապես լուծված կլինի», - ասաց Կոտայքի մարզպետ Ռոմանոս Պետրոսյանը:

Նախարար Արթուր Խաչատրյանն այգեգործներին տրամադրեց անմիջական խորհրդատվություն գյուղատնտեսության ոլորտում առկա ֆինանսական հնարավորությունների, նոր տեխնոլոգիաների՝ մասնավորապես կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման և արդյունավետության մասին:

Մինչև 2025թ. ինտենսիվ գյուղատնտեսության ոլորտում հասանելի կլինեն նոր ծրագրեր, որոնցով հնարավորություն կլինի ստանալ ֆինանսական միջոցներ՝ ցածր տոկոսադրույքներով և պետության կողմից՝ բարձր սուբսիդավորմամբ: